

1814.

16. 18. 20. 23. 25. 27. 29. 31. ՅՈՒՆՎԱՐ:

ՍԱՔՍՈՆՒԱ.

ԼԵՔՏ. 14 ԴԵԿՏԵՐԵՐ:

Բրինչիքէ Բօնեաթօվսքին որ էր Փրանսիայի պատերազմի ատեն ուղենալով անցնել Բէնիս Լեքսիայի քով եղած գետը ձիով (այն 68 թ., 295 էրես, անցած Կարլան դէպքէն), խրատովեցաւ գետին մէջ, և մէկ քանի օր անցնելէն ետեւ ձկնորսին մէկը ձուկ որ սալնեքէն՝ դետին մէջ գտաւ ասոր մարմինը, ձկնորսը երբոր տեսաւ որ աս իրեն որսը վարդարոված էր ոսկի զարդերով շերիանէրով՝ մակաբերեց թէ ասիկա պիտոր մէկ եւրեւր մարդմը ըլլա, անոր համար դուրս հանեց դրաւ ու մէկին մէկալին կրցըցընէր՝ և 60 թալէրի չափ դին դրաւ ով որ կուգէր առնուլ աս մարմինը: Աս խապարը հասաւ նաեւ Քօնթէ Բօթօքիին անկաճը, և երբոր ինքնալ գնաց տեսնելու, շուտը ճանցաւ որ Բրինչիքէ Բօնեաթօվսքին է, և 6 մատնիին որ էր Բրինչիքէին մատին վրայ, 100 Փէտէրիքեան ոսկի տրվաւ ձկնորսին ու առաւ ձկնորսը կրբաղձար որ աս մատնիներէն մէկը պահէր իրեն քովը յիշատակի հմը, բայց Քօնթէն պատասխան տրվաւ թէ աս մատնիները պիտոր ընծայ խրկէ Բրինչիքէին քրոջը, անոր համար ձկնորսը հաւանեցաւ և բաւական սեպեց պահել իրեն քովը յիշատա

կի համար Բրինչիքէին ոսկիէ պուռնութի խութին: Մարմինը խելմը ժամանակ կենալէն ետեւ իրեն ժողովողեան, ետքը թաղեցին փառաւոր զինուորական հանդէսով:

ԳԵՐՄԱՆՒԱ:

Պեկտեմբերի 14ին Լունդպուռկէն եկած թուղթերը հաստատ պատմեցին թէ Տանիմարդան խաղաղուի ըրաւ բոլոր դաշնակցաց հետը, անոր համար Ամպուռկ քաղաքը չորս կողմէն աղէկմը պաշարեցին դաշնակիցները:

Ամէն Բրինչիքէուե սահմանները որ աս ռաջ Ռէնօի դաշնակցութե մէկ մասը էին, դօրք հանեցին ոտք աս պատերազմիս համար 360,000 հողի: 1814ին 800,000 կտրիճ պատերազմով զինուորները պատրաստված պիտոր ըլլար որ իրենց զէնքերուն զօրութիւնը աշխարհքիս համար խաղաղուի վատորկէին: Պեկտեմբերի 7ին եղաւ մէկ օտառիկ պատերազմը Օլտեսլոհին մօտիկները՝ որ ըրին հիւսիսային կողմը եղած դաշնակցաց բանակին առաջապահ գունդը, Փրանսիայի ու Տանիմարդացիներուն դէմ. աս գործողութե մէջ դաշնակիցները սուրէ անցուցին Փրանսիային ու Տանիմարդացիներուն գունդին դրեթէ մեծ մասը, առին անոնցմէ 12 կտոր թօփ:

Խօսվեցաւ թէ Օրանժին Բրինչիքէն երբոր Օլանտային ցամաքը ոտք կոխեցին, ունէր

ներ իրեն հետը 7000 հոգի, ու 20,000 ալ թիւֆէնկ:

Պազի գաղթթաներուն մէջ ըսկեցաւ թէ աս Բրինջիբէն որ էր սոյով բուն Փրանսըզ, իրեն հաւատարմութիւն ու քաջութիւն գործ տեսնելուն համար Սպանիայի վերջի պատերազմներուն մէջ, ինկիլիզին տերուելը պիտոր պը սակէր ասիկայ ինկիլիզի թագաւորին աղջկանը հետ, ու ասկից ծնած տղաքները պիտոր ըլլաին անկախ թիւրք Օլանտայու:

Մարին Ելլա • 22 Դեկտեմբեր:

Տաւուսթ Փրանսըզին Մառէշալը դեկտեմբերի 15 ին զարնըվեցաւ Օլանտայի սահմանադրութիւնները դաշնակցաց հետ, բայց շատ փնտրութիւններ աս պատերազմը իրեն, զէրէմ վայ եղան իրեն գունդէն 10,000 հոգի մեռածով վերաւորվածով գերի բռնըվածով, և ինքը ետ քաշվեցաւ դէպ ՚ի Ամպուռ: Եղաւ մէկ ուրիշ պատերազմըմընալ Օսթրոմի մօտիկները • աս պատերազմին մէջ Վալմոտէն դաշնակցաց մէկ Ճէնէռալը 4000 հոգիով զարնըվեցաւ 10,000 Տանիմարդացիի հետ • բրինջիբէ Կուստալօն վերաւորված գերի բնկաւ Տանիմարդացիներուն ձեռքը, բայց շուտով փոխեցին մէկ ուրիշմը հետ հաւասար անորձանի: Վալմոտէն Ճէնէռալը տիրապետեց պատերազմի դաշտին և իրեն գունդէն զայ եղաւ 600 հոգի մեռածով վերաւորված գերի բռնըվածով ու 5 կտոր ալ թօփ, իսկ Տանիմարդացիներուն կողմէն ինչպէս որ իրենք կրիստոնքականին, կորաւ 1000 հոգի, 8ը կտոր թօփ ու 400 ալ գերի:

Պէնքէնտօֆ դաշնակցաց Ճէնէռալը առաւ Ճէնթուրիտեմպէկը • բերդին մէջ եղած Փրանսըզին զօրապետը իրեն զօրքով Փրանսա դնաց աս դաշնադրութիւն թէ տարիմը չափ կարօղ չըլլայ պատերազմ ընելու դաշնակցաց դէմ:

Վելլէմշաւթ բերդը այնչափ փութալով պարպեցին Փրանսըզները որ 20 կտոր թօփէն աւելի թողուցին հոնաեղը: Ան ամիսն Օլանտայի մէջ եղած քաղաքները որ խալսեցան Փրանսըզին ձեռքէն, մէկէն զօրք հասնեցին իրենց քաղաքներուն պահպանուել համար: Կուրշաւթ բերդը մինչև աս ատեն ներքա կը պաշտպանէր մէջի զօրապետը, անոր համար դաշնակիցները որոշեցին որ հոնաեղի լիճերը ստակէն առաջ անձնատուր չըլլանէ, աս ալ առնուն պատերազմով • Փրանսըզները աս բերդին պաշտպանուել համար շինեցին մէկ պատնէշմը իվէնֆլօթ հեղին մօտերը, և 200 հոգի 8ը կտոր խոշոր թօփով կը պատերազմէին դաշնակցաց հետ • բայց Պոյէ դաշնակցաց Ճէնէռալը վազեց

մէկ օրմը ասոնց վրէ ու առաւ պատնէշը խելմը գերի բռնելով, իսկ մէկալ մնացածներուն վրէ սաստիկ կրակ ընելով մինչև բերդի պատին տակերը վռնտեց:

Դաշնակիցները ամիսն պատրաստութիւն տեսերէն առնելու համար Փրիէտրիքսօրդ բերդը պատերազմաւ, և զօրքը հանդերձ Փօսսէ Ճէնէռալով բանակերէն 300 ատով հեռու բերդի պատերէն: Դաշնակիցները սկսան կրակ ընել թօփով ամրոցին վրայ, և քշեց աս կրակը մէկ օրմը մէյմընալ գիշեր • ամրոցին զօրապետը տեսնալով թէ դէմ պիտոր չիկարենայ դնել, դաշնադրուի ըրաւ ու յանձնեց ամրոցը դաշնակցայ: Ամրոցին մէջ զըրան դաշնակիցները 101 կտոր թօփ, և խելմընալ պատերազմի պաշար:

Չիլցցէնդի ու Վիլուսթայի գաղթթաներուն մէջ դեկտեմբերի 23 ին խապարնէրուն մէջը պատմեց, թէ Ամպուռ քաղաքը յանձնըվեցաւ դաշնակցաց, և Էքմուհլին Բրինջիբէն որ էր Ճէնէռալ աս քաղաքին մէջ հանդերձ իրեն գունդով գերի եղան դաշնակցաց:

Մանիէթ • 3 Յունվար:

Յունվարի 1ին գիշերը Սաքէն Մոսկովի Ճէնէռալը Ռէնօ դետին անդիի կողմը անցաւ պատերազմով, և առաւօտ եղածինպէս 10,000 Մոսկով կեցած էր Ռէնօ դետին անդիի եզերքին վրէ • Փրանսըզները սաստիկ կրակ ըրին ասոնց վրէ անցնելու ատեն, բայց չիկրցան արգելել • որչափ պատնէշներ կարնէ հոնաեղմանքը առին Մոսկովները 2 սահաթ պատերազմ ընելէն ետև: Եւ աս անցնելուն պարագայները այնպէս պատմըվեցաւ գաղթթաներուն մէջ:

Գիշերվան սահաթը 12ին Մոսկովները 50 կտոր թօփ դրին անտեղը ուրտեղ Նէքսը կրիստոնքի Ռէնօին հետ • առաւօտեան սահաթը 3ին Մոսկովին զօրքերը սկսան մոնալ խալրէներու մէջ • սահաթը 5ին աս զօրաց առաջապահ գունդը 12 խալրիով սկսան առաջ ելթալ, և երբոր մօտ էին անդիի կողմը ցամաք ոտք կոխել անտեղ իմացան Փրանսըզները, և սկսան սաստիկ թիւֆէնկի կրակով պատերազմի ատոնց հետ • աս միջոցին 50 խալրի ալ ճամբայ ելան անցնելու հմը անդիի կողմը, ասոնք պաշտպանելով մէկալ զօրքնալ վերջապէս ցամաքը ոտք կոխեցին, և պատերազմեցան իրենց թիւֆէնկի վրէ եղած խշտերով հոնաեղմանքը եղած պատնէշներուն հետ, և ով որ դէմ կըներ Մոսկովներուն զամիկները անխնայ կըջարդէին:

Կէսօրէն ետև Ռէնօ դետին վրէ շինեցին կա-

կամուրջմը, և անցան աս կամուրջին վրայէն դաշնակցաց զօրքը բոլոր նոյն օրը: Աս գործողութիւն մէջ զայ եղան Մոսկովներէն 400 հոգի մեռածով վերաւորվածով. ֆրանսիացիներէն բռնըմեցաւ 192 հոգի դերի, և 1000 հոգիի չափ ալ ետ քաշվեցան դէպ'ի Օբերս-հէիմ: Նոյն երկուսնը Սաբբէն Մոսկովին Ճէնէռալը՝ որուն բանակը կրթազկանար 48,000 զինուորի բանակեցաւ Վօրմա:

Անցաւ նաև Պուշէո Պոուշի Ճէնէռալ նալ բոլոր իրեն բանակով Ռէնօ գետին ան դերի կողմը Հէբբէնհէիմին մօտիկներէն: Կէ սորէն ետեւ սահալթը շին Պոուշին թիւորը եկաւ Մանհէիմ մէկ քանի Պոուշի ձիաւոր ներու գունդով:

Բրէէսթ Մոսկովի Ճէնէռալնայ անցաւ Ռէնօ գետին անդէի կողմը Բօպլէնցին Մօտիկներէն, ու պատերազմով առնուլ տրվաւ Պիւթրօն Ճէնէռալին ան պատնէշները՝ որ ֆրանսիացիները շինեցին, ուրտեղ որ Լահն դետը կրխառնըվի Ռէնօի հետը. ետքը դնաց Բօպլէնցին վրայ, ու խելը պատնէ պատնէ րադմով առաւ, աս քաղաքնայ: Աս քաղաքը առնելու առնէ դաշնակիցներէն մեռաւ 2 հոգի 10 ալ վերաւորվեցաւ. ֆրանսիացիներէն 500 հոգի դերի բռնեցին ու 7 ը կտոր ալ թօփ: Ետք Պոուշի Ճէնէռալը անցաւ Ռէնօ դետը դեկտեմբերի 31 ին կէս գիշերուն. ու առաւօտը տիրապետեց Օպէռ-Աէսէին ու Պաբհարաբէն 200 դերի բռնեցով: Յունվարի շին Հունէրհէիմ Ճէնէռալը տիրապետեց Սլոնօպէռիկին, Բրէտ-Թիցնաբէին, Ռհէինպուլիին. ֆրանսիացիները Սիմիեր դացին կեցան, բայց ետքը աս կից ալ վաճակեցան:

Վասիլէէթրօֆ Ճէնէռալը նոյն օրվան մէջ պատերազմեցաւ Մութթիքըռատին հետ, դերի բռնեց 2 զօրապետ, 11 օֆֆիցիալ, 200 ալ ձիաւոր: Ալէէին մէջ Պիթօն Բրինչիբէն դերի բռնեց, մէկ տեղակալ զօրապետ մը 5 օֆֆիցիալ 120 ալ զինուոր: Աս գործողութիւններէն ետեւ դաշնակցաց բանակները միացան Մաար-Լուան մօտիկները: Յունվարի 8 ին Պապիէռացուց ու Նէմցէին բանակները դացին դէպ'ի Բօլմար, աս երբոր իմացան ֆրանսիացիները շուտով թողուցին քաղաքը ու ելան Իախան: Վինթէնսթէին Մոսկովին Ճէնէռալը անցաւ Ռէնօ գետը Փորթ-Լուան, և տիրապետեց անտեղի ելած ամրոցներուն՝ որ ֆրանսիացիները թողուցեր փախերէին: Թողուցին նաև Սալցան, և դաշնակիցները տիրապետեցին: Բոլոր աս առնըված տեղերուն բնակիչները որ էին ֆրանսիացի, մէկէն կրմիանային դաշնակցաց հետը լեղէմ Նաբօլէսին: Բոլոր ֆրանսիացի

եկած խապարները իմացուցին թէ այսպէս յանկարծ անցնելով դաշնակիցները Ռէնօ դետը, շատ վախ ու սիրտ կտորիլ ձգեցին ֆրանսիացիներուն մէջ:

ՄԵԾ ՏՈՒԳԱՅՈՒԹԻՒՆ

Փառնքօտութիւն.

Փառնքօտութիւն. 17 Դեկտեմբեր:

Դեկտեմբերի 14 ին քուռիէմը եկաւ հոս խապար բերաւ թէ Ինկիլիզները Օլանտայի ցամաքը զօրք թափեցին, ու առին Հէլլօհ-Թըսլուիս քաղաքը:

Դեկտեմբերի 6 ին գրվեցաւ աս հետեւէլ խապարները Օլանտայի մէջ եղած դաշնակցաց բանակէն:

Պուլով Մոսկովին Ճէնէռալը առաւ Առնէհէիմ քաղաքին բերդը պատերազմով, աս բերդը խիստ հարկաւոր էր դաշնակցաց բոլոր Օլանտային խոլայուք տիրապետելու: Աս բերդին մէջ կար 4000 հոգի պահապան զօրք, և իրեն ամեն կողմը պատած էր ամուր պատերով, բերդին մէջը մտնալու առէնը շատ մեծ կտորիձուի ցրցուցին Պոուշին զօրքը: Պուլով Ճէնէռալին դունդէն մեռածով վերաւորվածով զայ եղաւ 300 հոգիէն առէին:

Մարքլաի զօրապետը որ էր զօրապետ Վինձինձէռօտ Մոսկովի Ճէնէռալի գունդին առաջապահ խումբին՝ Նոյեմբերի 14 ին մտաւ Ամստրամ մէկ խումբովմը. բոլոր ժողովուրդը ընդունեցան զասոնք անպատմելի խնոտովմը:

Կակարին Բրինչիբէն որոշեց 300 խաղախ որ երթան զարնըվին Տէվէնթէրէն ելած ֆրանսիացի զօրքին հետ՝ որ կուգէին տիրապետել աս տեղի վարըշին, ու թէ որ չեկրնան դեմ դէել դաշնակցաց՝ կրակ տան բոլոր մոխիր դարձնեն տեղը: Խաղախները խելմը ժամանակ պատերազմէին ետեւ ասոնց հետ, վաճակեցին ֆրանսիացիները հստեղը եղած կամուրջէն անդին, խաղախները՝ ան խումբին մեծ մասը ջարդեցին, ու 60 ալ դերի բռնեցին: Նոյեմբերի 28 ին Նարրիսքի տեղակալ զօրապետը տիրապետեց Ամերսֆորթին, տիրապետեցին նաև Բուքսալէն ու Փորի բերդերուն՝ որոց պահապան զօրքը պատերազմի դերի բռնեց:

Վինձինձէռօտ Մոսկովի Ճէնէռալը խըրկեց Ութրէք քաղաքին բանակները Շվեդի թիւորութե յաջորդ Բրինչիբէին, և Բրինչիբէն ալ իրեն կողմէն խրկեց Ալեքսանդր կայսեր: Դեկտեմբերի 28 ին Շվեդի գունդը մէկ տեղ ժողովեցան ու ամեն պատրաստութիւն տեսան որ զարնըվին ֆրանսիացիներուն հետ, բայց

բայց Էքմուհլին Բրինձեկն որ էր ղլխաւոր Ճէնէալը անտեղի Փրանսրդի բանակին, ետ քաշվեցաւ իրեն կեցած տեղէն դէշեր ատեն ու զնաց Պիլէկին ետեւը: Թէթ թէնայօն Մոսկովի Ճէնէալը զնաց իրեն զօրքով Արմֆէլտին վրայ, միացաւ Վարօնցով Ճէնէալին ձիււորներուն հետ ու կրօրեց Ամպուռկին և Լուպէքքային մէջ եղած հաղորդակցութիւն: Վէճէնսաք Ճէնէալը անցաւ Սթէքնիդ ձին անդիւր կողմը, ու միացած Վալմօտէն Ճէնէալին խումբէն հետ դացին Օլտէսլոհին վրայ: Դաշնակիցները որոշեցին որ Լուպէքքա քաղաքը առնուն Փրանսրդին ձեռքէն պատերազմով, անոր համար Սթէտինկին Քօնթէն բոլոր Շվեդին գունդը հոն տարաւ բանակեցուց: Քաղքէն մէկ միջ հեռու զօրքը կեցուց, որպէս զի սանդուխները ու այլ ամեն պատրաստած բաները քաղաքը տանելու համար՝ անոնք տրհանին: աս միջոցին ուղեցին դաշնադրուի ընել Փրանսրդները դաշնակցաց հետ, սահաթը Յնէր որ դեռ սանդուխները և այլ ամեն պատրաստուիները չէին հասած: մէկ կողմանէ ալ Սթէտինկի Ճէնէալը տեսաւ որ խիստ աղէկ ամրացած էր Լուպէքքան, և ունէր ամեն պատրաստութիւնները դէմ դնելու դիւրութիւն, անոր համար հաւանեցաւ ան Փրանսրդի առաջարկութեւ, և քրին դաշնադրութիւն: աս դաշնադրութեւ զօրութիւնը դաշնակիցները տիրապետեցին առաւօտեան սահաթը Յնէն Մօլէն քաղաքի դռան, և իրիկվան սահաթը 10ին Փրանսրդները պարպեցին քաղաքը: և երթեալ օրը առաւօտը կանուխ դաշնակիցները պիտոր պատերազմին Փրանսրդներուն հետ: Բայց որովհետեւ Փրանսրդները քաղքէն առջեւ ունէին մէկ տեղմը որ ամուր շինուած էր և պատած էր չորս կողմէն կրկին լիճերով՝ որոց մէջը լցուն ջուր էր և դաշնակիցները չէին կրնար դիւրութեւ առնուլ, անոր համար Փրանսրդները կրնային ամ հանդատութեւ ետ քաշվիլ քանի որ չէր շինված Թարվէ գետին վրայ կամուրջ: և հոստեղը կամուրջ ձգելուէն քիչ պէտք էր 24 սահաթ՝ ինչպէս որ ըսին զինուորական շարտարապետները:

Առաւօտեան սահաթը ճին Վալմօտէն ու Սթէտինային դաշնակցաց Ճէնէալները իրենց ձիււոր գունդով սկսան Փրանսրդներուն ետեւէն իյնալ քաղաքի մէկ կողմանէ: Աս միջոցին 2 Թօփ առին և մէկ բանի հարկուր հոգիւր գերի բռնեցին:

Լուպէքքայի բնակիչները՝ դաշնակցաց պիտոր օգնէին թէ որ քաղաքը առնելու համար պատերազմ ըլլային:

Ահից ետ Լուպէքքա քաղաքը ազատե-

ցաւ, ու եղաւ առջիննայեւ ազատ քաղաք: տնկրվեցաւ իրեն աշտարակներուն վր դրօշակը որ էր ճշմարիտ նշան վաճառականութեւ: քաղաքականութեւ:

ԲԱՆԶԻ ՊԱՍՍԻ.

Ամբողջ. 11 Դէպքերի:

Ամպուռկ քաղաքը երբոր պիտոր պաշարվերնէ Փրանսրդները շատ տուներ այրեցին աս քաղքի վարչներուն մէջ. աս տուներուն բնակիչները գիշ բան կրցան փախցնել իրենց տուներուն կահկարասիներէն, զերեմ բաւական բեռան առապա չէր գտնուէր, մէկ կողմանէ ալ Փրանսրդին զօրքերը յափուտակելով կրդողնային կրփախցնէին, դեկտեմբերի 10ին, 40 խաղախի չափ մօտան իթէլօհ, կար հոստեղը 400 Տանիմարգացի զօրք, բայց ամենակին դէմ չիդրին խաղախներուն: խաղախները տարին անկից 400 ձի, մէկ սունառակմը՝ որուն մէջ կար 6000 սկուտ, և Քօքէնհայկէն եկած բոսոր: Քաղաքացիներէն մէկը կուղէր երթալ Քիէլ՝ բայց չըկրցաւ երթալ, աս բանս խահվէիմը մէջ պատմելուն համար բանոր դրվեցաւ, ու վերջը հրապարակաւ հօտէյէնէկ զարկին աս մարդուն ու քաղքէն դուրս վռնեցին: Փրանսրդները ուղեցին 3 եկեղեցի որ ընեն ղևնուորական մաղաղայ: պաշտօնատարները շատ ետեկ ինկան արդելու աս դիտաւորութիւնը բայց չեկրցան: Հորթու ու խողի միսը բոլորովին հատեցին, և ստակով պիէ չէր դրնուէր: Փրանսրդի ձէնէալը հրաման հանեց որ քաղքէն մէջ որչափ թագէ միսի ոսկոր դրանուէր տրվի զինուորական հիւանդանոցներուն, քաղաքի մէջ եղած բանտարկեալները բոլորը քաղաքէն դուրս վռնուեցին, և աս տեղերը շինվեցան զինուորական հիւանդանոց, որք սուրց տուններնայ պարպեցին, ու քաղաքէն դուրս վռնուեցին:

Փրանսրդի Ճէնէալին հրամանաւ քաղաքէն դուրս վռնուեցին նաև օտարականները, ծառաները, բանտարկները, և դեկտեմբերի 21 քոցվեցաւ քաղաքին դուռները և կտորը վեցաւ ամեն հաղորդակցութիւնները, զերեմ բազմուի խաղախներու չորս կողմէն պատեցին քաղաքը: Պէնիիլէն Մոսկովին Ճէնէալը որ կհրամայէր Ամպուռկ պաշարող զօրաց գունդին վրայ, դեկտեմբերի 24ին ըրաւ աս հետեւեալ ծանուցման թուղթը:

„Կիմացնէնք ան բնակիչներուն որ Ամպուռկ քաղաքէն դուրս վռնուվեցան, թէ ով որ կրնայ ղէնք վերցընել, դան միանան իմին բանակիս հետը, նորէն ներս մտնալով յաղթանակով իմին բանակին հետը, և հրաւան

ման կուտամ որ վրէժ առնուն իրենց չար չարոյններէն , :

Ամպուռի քաղաքին մէջ կար 14,000 պահական զօրք, ասոնցմէ 2000ը էին Օլանտայիք . ասոնք մէկ աղաչանքի թուղթմը գրեցին Պէնսիլանի Ճէնէրալին դեկտեմբերի 24ին , որով կուզէին միանալ դաշնակցաց հետը , և անկից ետեւ շատ մարդ փախաւ քսոնցմէ , մանաւանդ թօփձիներէն :

Զ Վ Ի Ց Ց Ե Ռ Ի .

Սլէպֆոն-պա . 1 Յոսեփարի :

Ղաշնակցաց զօրաց թիւը՝ որ մինչև դեկտեմբերի 25 մտան Սլայսի , կը հասնէ 200,000 հոգի , և սկսան երթալ դէպ 'ի Փրանքաֆօնթէա . Փրանսա մտնող դաշնակցաց բանակին առաջապահ զօրքը էր 40,000 խազարի :

Սլայսիայի մէջ Պայօնային առջևը եղաւ մէկ սաստիկ արիւնահեղ պատերազմը , աս պատերազմին մէջ երկու կողմանէ զայ եղաւ 30,000 հոգի , բայց ինկիլիզները աչէկ դիրք մը ձեռք ձգեցին իրենց՝ բանակին համար :

Սլէպֆոն-պային մէջ ամմէն հարկաւոր պատրաստութիւնները տեսան , յունվարի մէկին ընդունելու համար Աղեքսանդր Մոսկովին կայսրը :

Պարիզութի գաղթեալին մէջ դեկտեմբերի 27ին խապարներուն տակը պատմեց թէ թօփառու բերդը որ է Էլլա դետին՝ վրայ անձնատուր եղաւ դաշնակիցներուն դաշնադրութե , որոց ղեկավար յօդուածները էին աս հետեւեւները . բերդի պահպան զօրքը սեպտեմբերի 10ին բերդէն դուրս ելան զինուորական պատուով ու արայով , ու զէնքերնին վար ձգած կենան Բրուսսիայի մէջ , մինչև որ փոփոխվին դաշնակցաց դերիններուն հետ :

Դեկտեմբերի 27ին Մալա ըսված բերդը յանձնընկեցաւ դաշնակցաց , 8 կտոր թօփով . յունվարի 10ին Պաուշները տիրապէտէնապետոր աս բերդին . կար աս բերդի զօրացը մէջ փոխադրական հիւանդութի : Փրանսիայի պահպան գունդը աս բերդին մէջ էր 5 Ճէնէրալ , 10,000 ալ զինուոր , կարնաւ 250 կտոր ալ թօփ : Թօփառու բերդը դաշնակցաց յանձնընկեցին առաջ , Փրանսիայի զինները 51 հոգի թիւֆէնկէսի շրինքի բնակիչներէն , վնդի ասոնք իրենց յուսահատութե կուզէին բանալ քաղաքին դուռները թափուէն ձէնէն Ճէնէրալին՝ որ պաշարեւերը բալարը :

Փրանսիայի տահմանադրութիւններէն եկած թուղթերը պատմեցին թէ դժուարութիւններ ելան Փրանսիայի վերջի զինուորադրութե հա-

մար . շատ տեղվանք այնպիսի մեծ դժկամաւորութիւններ յըցուցին՝ որ քաղաքագետները չհամարձակեցան հրապարակաւ զօրք ժողվել , աս պատճառաւ դիշեր ժամանակ պարտիկ խումբերով աստիս անդին կը պարտէին ու կը բռնէին մարդիկները զօրք ընելու համար : Մօրալիհանին սահմաններուն բնակիչները այնչափ կատուած էին , որ չէ թէ զինուորադրութե թող կուտային , այլ և կարգելուին ան նոր ժողված զինուորներուն խումբը՝ որ կանցնէր Ֆինէսթէրէէն . կարգելուին և կը պատերազմէին նաեւ ան զօրացը հետ որ կա , ու ջնդրէին աս խումբին . աս միջոցիս փառէղու մէջ տիրերէր մէկ սաստիկ վախմը ու սիրտ կոտորիմը : Փարէզէ եկած մասնաւոր խապարները հաստատեցին . թէ խռովութիւն ելաւ քաղաքի բնակիչներուն մէջ , պահական զօրքը ջանաց հանդարտեցնել աս խռովութիւնը : Աս գործողութիւն մէջ ըսպանվերէ 2 Ճէնէրալ . աս միջոցիս մէջ Նաբօլէօն կայսրը էր Սթրասպուռլ : Փրանսիայի աղբը չէր ուղղը պատերազմի մէկ հոգեւ ժամանակութե համար իրեն Էլստի կուզէին դաշնակցաց բռնած ձաժբան , մանաւանդ որ դաշնակիցներնալ կը հրաւիրէին Պրանսիայ ալ գործակից ըլլալու իրենց օրինաւոր վախճանին՝ աղաառու ու խաղաղութե համար :

14 ին :

Ալեսօրէն ետեւ քիլին մէջը սկսան դարնել ամմէն զանգակները ու հետմեջաւ 101 թօփ նշան տալու համար թէ Աղեքսանդր կայսրը պիտոր երթայ աս քաղաքէս Պաղլէա : Սլէպֆոն-պային բնակիչները շատ սերկապէրէն ու յարկերէն կայսեր հետը իրեն անուշ ու ազնրկական կենցաղավարութե համար : Երբոր կերթարկոր քաղաքէնէ , ամմէնքը կօրհնէին ու բարեմաղթութի կընէին ասոր ետեւէն , վնդի յըցուց ինքնալ բարեարտութի ժողովրդեան վն : Կար քաղաքին մէջ մէկ բնակարանմը ուրտեղ կը ժողվէին ամմէն կոյրերը պահելու համար ժողովրդեան խարճով , և հոտեղը օլտուխաղ բանալ կը սորվեցնէին աս կոյրերուն , երբոր դնայ տեսնելու աս տեղը , խեղճ ստակ պարգեւեց , և տրվաւ խեղճալ ստակ Նեուհաուզենի գլխաւոր կառավարին՝ որ բաշխէ աղքատ ժողովրդեան :

Պաղլէա Պաղլէա Ճէնէրալ Ռէնօ գեալին անդէ ինքն անցնէին առաջ հրապարակեց աս հետեւալ ժանուցման լուղը ֆրանսիայի դուռն :

Սլէզիայի դուռը բերի հասուցի Ռէնօ դետին վն՝ հաստատելու համար աղաառութիւն ու անկախութե ազգերուն մէկ լեհասուր խաղա

ղաղութիւնը: Նաքօլեօն կայսրը միացուց Օւլանտան իդալիան և մէկ մասը գերմանիան: Ֆրանսերը սահմաններուն հետ, և ծանուցում քրտա թէ անկարելի է որ իրեն վաստը կած տղերէն դելը ձեռքէ հանէ: Թէպէտ և իրեն թշնամիները հասած ըլլան փարեղուն տակերը ու պաշարեն քաղաքը: Իսկոր Եւրոպայի տերութիւնները զինուորներն աս ծա նուցմանը դէմ և աս սկզբունքներուն դէմ, դուք ալ կուղէքի պաշտպանել այսպիսի ա նօրէն դիտաւորութիւն, թէ որ կուղէք նէ, խառնըլեցէք Նաքօլեօնին խումբերուն հետ, և ջանացէք պատերազմիլ լեղէմ արդար պատերազմիմը՝ որ յայտնի կերևոյկոր օյ պաշտպանութիւն մեր վր: Եւ թէ որ չէք ուզեր միաբանիլ անոր հետնէ, հանգիստ կեցէք մեր պաշտպանութիւն տակը: Ես ձեզի խօսք կուտամ պահելու ամբողջ ձեր ունեցած ժաւանդութիւնները: ամիկն քաղաքացի, ամիկն իւրեղացի հանգիստ կենայ իրենց տեղերը, և իւրաքանչիւր պաշտօնատէր մնայ իրեն պաշտօնին մէջ, և առանց խառնութիւն իւրաքանչիւրը առաջ տանի իրենց պաշտօնը: Երբոր դաշնակցաց զօրքը կըմտնան ձեր սահմանները՝ անկից ետեւ դադրի ամիկն տեսակ հաղորդակցութիւն ֆրանսերը տերութիւն հետ, և ու որ չհնազանդի աս հրամաններուս, դաշնակիցները կըսեպեն զանի մատնիչ, և պարտական կըլլայ զինուորական դատաստանի առջև, ու պատիժ կըկրէ մահուամբ:

Յունվարի 1. 1814: Հապապեալ Պրուշեա Ճէնէալ:

Պաղեալ • 21 Դեկտեմբեր:

Դեկտեմբերի 11ին իրկուներ 100,000 դաշնակցաց զօրքերէն որ հասերէին Չիլիցէոիին սահմանադրուել, ուղեցին անցիլ Ռէնօ դետին անդիի կողմը Չիլիցէոիին սահմանին մէջէն: Չիլիցէոիին սահմանադրուիները պահօղ զօրքը ետ քաշվեցան, վր դի Պուպնա Բօնթէն Նեմցի կողմէն, ու Հերրսքֆանտ ղօրապետը Չիլիցէոիին կողմէն ըրին դաշնադրութիւն միաբանութիւն դաշնակցաց հետ ֆրանսերէն դէմ, և այսպէս դաշնակիցները մտան հոս և անցան Ռէնօ դետը թէ վերի կողմէն, թէ վարի կողմէն:

12 Յունվարի:

Պէռնաի խապարները իմացուցին որ յունվարի 4ին փարեղէն ձամբայ ելան պարոն Դալէյրանտը, Բէռիկուտը, ու Պոնօն վիլը, որ լիակատար իշխանութիւն կերթային որ դաշնակցաց բանակը հաշտուէ վր խօսելու համար: Փարիզու ժողովուրդը ամիկն անդամ որ կայսրը հրապարակի մէջ կըտես

նայիննէ, բարձր ձայնով կըկանչէին խաղաղութիւն, խաղաղութիւն:

Յունվարի 22ի խապարներուն տակը պատմութեամբ իրեն հաստատ թէ ինկիլիզ տերութիւն յայտնեց իրեն բաղձանքը դաշնակից տերութիւն, որ ֆրանսայու պատկը նորէն արվի առջի թշրահան ցեղին:

Սիր Թօմազ Կոահամ Ինկիլիզի Ճէնէալը ցամաքը ելաւ 10,000 թիւ ֆէնկով որ հետը բերերէր Պրուպանթի բնակիչներուն համար՝ որ շատ մեծ փափաք կըցըցընէին ֆրանսերը տերութիւն կառավարութիւն ազատելու համար:

Փետրուարի • 6 Յունվարի:

Մոսկովի կայսեր ծանուցման Բաղլեր՝ որ Ռէնօ գետը անցիլէն առաջ հրապարակէ իրեն ղօրա յը ձէ:

Չեր կարիճուիլ ու ձեր ուժը բերին զձեղ Օբայի եղբրէն մինչև Ռէնօիս եղբրը, ու տահա առաջ ալ պիտոր տանին: Ահաւասիկ մենք կանցնիլքիոր Ռէնօ գետը ու կըկոխենք կոր ան երկիրը, ուրուն դէմ կընենքիլոր մէկ արիւնասէղ ու սարսափելի պատերազմ մը: Հիմայ ազատեցինք մեր հայրենիքը, փառաւորեցինք մեր անունը, ու միանգամայն տվինք Եւրոպայու անդին պարզեմը որ է իր ազատութիւն ու իր անկախութիւն: Աւուրիչ բան չիմար մեզի, բայց եթէ պատկել աս մեր յիշատակաց արժանի գործքը խաղաղութիւն, որուն կըբաղձան ամիկները: Ասկից ետեւ թող նորէն դառնայ բոլոր աշխրբիս հանգարտութիւն ու ուրախութիւն: Ամիկն Տէրութիւն նորէն երջանկանայ, ու պաշտպանվի իրեն յատուկ օրէնքներով, ու իրեն մասնաւոր կարգադրութիւններով: Թող ասկից ետեւ ծաղիկ ամիկն քաղաք ամիկն տեղ հասարակաց բարեոյն համար, թէ կրօնը, թէ արհեստները, թէ գիտութիւնները, թէ վաճառականութիւն: Աս է մեր բաղձանքը: Մենք չենք ուզեր որ պատերազմը երկրնայ, ու աւերութիւնները շատնայ: Իրաւ որ մեր թշնամիները երբոր մտան մեր քաղաքները, մեզի շատ փաս հասուցին, բայց հիմայ կըկրենիլոր անոր սարսափելի պատիժները: Աճային բարկուիլ զիրենք կործանեց: Մենք չենք ուզեր հետեիլ անոնց արված օրինակին: Ամենակարող չիւ մէկ թիւութեան ձեռքէն չիհաճիր, անոր համար մեր միտքը աս է՝ որ մոռնանք մեր թշնամայն մեկն արված փասները, ու դնենք մեր ձեռքը իրենց վր, չէ թէ իրէժանդրուէ համար, հապա մեզի բարեկամ բնիւր համար, ու ջանանք որ արիւն չիթափի: Մոսկովիներն փառքը աս է, որ յաղթին իրենց թշնամիներուն:

բուն՝ բարեբարութի ընելով, թէպէտ և ա-
նոնք յաղթոված ըլլան. ու ընդունին իրենց
թշնամիները ընտոր իրենց եղբարները: Այս-
պէս կըսորվեցնէ մեզի մեր հաւատքը, ու մի
բերին կը հրամայէ մեզի, որ սիրենք մեր
թշնամիները, ու բարի հատուցանենք մեր
ատենիներուն: Չինուորներ: Գիտեմ որ
դուք ձեր խոհական կենցաղավարութիւն
թշնամույն երկրին մէջ, պիտոր ընդունիք
յաղթողական պատիվը՝ ձեր մեծասրտութիւն
ինչպէս որ զենքով ալ ընդունեցաք, զորա-
ւոր գտնովելով զենք վերցնողներու դէմ, ու
քրիստոնէական սիրով մէկ ըլլալով յաղթը-
ւոյնբուն հետ, շուտով կը ընդունիք աս ձեր
աշխատակի գործքը. պահելով ձեր անունը
որ ունեցաք ձեր քաջասրտութիւն ու ձեր ու-
ժովը: Ասով կը կատարէք մեր սրտին բաղ-
ձանքը որ է ձեռք ձգել մէկ ընդհանուր խա-
ղաղութիւն: Մանապէս գիտեմ ու կը յու-
սամ որ ձեր առաջնորդներն ալ կը ջանան պա-
հելու ամմին զորաւոր ու հարկաւոր միջոց-
ները, ու պիտի հիշ մէկը ձեզմէ՝ կարող չըլլայ
հակառակ գործքովը կոտորել այն բարի ա-
նունը, որ ունեցաք:

ԱԼԵԿՍԱՆԴՐ.

ՔՐԱՆՍԱ.

Նեոֆլաթէ. 22 Դեկտեմբեր:

Շվեդի թափութե յաջորդ Բրինչբէն բո-
լոր տիրապետեց Հօլսթէինին, Ամպուռի
քաղաքը սրիւր պաշարեց, ու ստորագրեց
զինացողութիւնն ու խաղաղութիւն Տանիմար
դաշնակցութիւն հետ. դաշնագրութիւն զխաւոր
յօղվածները էին աս հետեւեալները: Տրօնթ-
հէիմ որ է Նորվեգիային մէջ յանձնովի շէ-
տի թափութիւն: Տանիմարդան միանայ դաշ-
նակցաց հետ լէդէմ Ֆրանսըզի պատերազմ
ընելու համար. տայ 25,000 զօրք. ասոնց
տեղը ինկիլիզր տայ Տանիմարդային ան տե-
ղերը որ ինքը տիրապետեց:

Սթուտքարտի գաղթեցային մէջը դեկտեմ-
բերի 22ին խապարներուն տակը կարգաց վե-
ցաւ թէ Մուրատ Նաբօլին թափութիւն միացաւ
դաշնակցաց հետ, կարգի դնելու համար Եւ-
րոպայի տերութեց հաւասարակշռուիլ, և
ձեռք ձգելու մէկ երկարատև խաղաղութիւն
Եւրոպայի. աս թափութը պիտոր տար դաշ-
նակցաց 30,000 զօրք պատերազմելու համար
Նաբօլին դէմ:

Սմիլայէլիտա. 8 Յունվար:

Պուսնա Նեմցի ճէնէռային խապարնե-
րուն կտօրէ, ճէնէռայի ճէնէռայ առա-
ջարկեց Եւրոպի բերդի զօրապետին՝ որ անձ-
նագուր ըլլայ, և երբոր մոտիկ չըդրաւ նե-

սկսաւ պատերազմիլ: Աս բերդը աղէկմը
ճէնէռային հետ ան դաշնակցաց թափութին որ
վարպետ կերպով շարված էին, և յետ առ-
նըվելուն մէկ բարձր բլուրմը բերդին մօտիկ,
բերդին ճէնէռայը տառուլով նշան տրվաւ
որ դրսէն պատերազմը դադարեցնեն, և ան
միջապէս խուկեց ճէնէռային ճէնէռային
առաջարկութիւն թէ անձնատուր կը ըլլայ, և
աս առաջարկութիւն մէջը կիմացընէր թէ բեր-
դին պահապանները պատերազմի գերի կը-
սեպվին. բերդին մէջ զըտնըվեցաւ 6 խոշոր
թօփ, մէկ հաւան թօփի, հազարաւոր թօ-
փի կիւլէներ, և խելմընալ գրին ուրիշ ու
ուտելու բաներ: ճէնէռայ Քօնթէ Լան-
ժէռօնը պաշարեց Մակոնցան բաւական
զօրքով:

Ֆիլո մառէշալ Բրինչբէն Շվառդէմ-
պեդի ճէնէռային բանակը Ռէնօ գետը անց-
նելէն հետ, Լանտսքօնին բերդին մէջը ա-
ռաւ 7 թօփ. Պամօնթին մէջ առաւ 13.
Նեոֆլաթէին մէջ 20. Ճինէլուային մէջ 117.
Եւրոպի բերդին մէջ 7 թօփ: Պուշէն ճէնէ-
ռայալ Նեքքար դետին բերդին մէջ առաւ
8 թօփ. Քօպլէնցային մէջ 7 թօփ, ասոնց
մէջաւ ձեռք ձգեց խելմընալ պաշար թէ կե-
րակոյ թէ պատերազմիլ:

Ի Դ ԱԼԵԿՍԱ.

Բապլա. 18 Յունվար:

Միլանի գաղթեցային մէջը պատմեց թէ դեկ-
տեմբերի 14ին Իդալիայի փոխարքայի թա-
գուհին իրեն տղաքներով զնաց Վէոնա ալ-
ցելութիւն իրեն երկանը, և 17ին դարձաւ նո-
րէն Միլան:

Յունվարի 17ին իրկուր բրինչբէն Բին-
եաթէլին որ էր Նաբօլի թագաւորին ճէ-
նէռայը անցաւ Բաուլային ու պատմեց թէ
Նաբօլի թափութը յունվարի 7ին հրատարակեց
պատերազմ Ֆրանսըզին դէմ միաբանելով
դաշնակցաց հետ, և թէ 17ին Նաբօլի թագա-
լիները պիտոր մոտային Ֆէռառա 6000 հո-
գիով:

Աս միջոցներու մէջ Իդալիայի կողմը ե-
ղած դաշնակցաց բանակը չըրաւ մէկ երևե-
լի գործողութիւն: զերէմ Ֆրանսըզները կե-
ցերէն Վէոնային մէջ, և Նեմցիին բանա-
կը կեցերէր աս քաղաքի շրջանակները, և
ինչպէս որ կերկնարնէ Նեմցիները աս կող-
մերս չէին ուղեր շատ պատերազմիլ:

Նեմցի յայտարարութիւն կարէ որ աս-
լի ինչ լեւեմնացաւ:

Աս վէճը թէզմը դադարեցաւ, վասն զի
վերջապէս հասաւ Բուակա Յունիսի 28ին,
բուն Ֆրանսըզի լեակատար իշխանութիւն
ու:

ունեցողը, որ բուն ժողովքի համար որոշված օրէն 16 օր ուշ էր: Աս գործակալին գալովը խայրի ամենեւին տարակոյս չի մնաց որ ժողովը ըսկրսի:

Կարգաւորութիւնները թէ ինչպիսի մեկզմեկու իրենց լիակատար իշխանութիւն ունենալը պիտոր ցըցընէին, որ արդէն որոշված էր երկու կողմէն ալ, ու վիճաբանութիւն չէր վերջընէր, սկսան պօշ ժամանակ կորսնցընել վիճաբանելով այսպիսի բաներու վրայ որ չի կրցաւ Նէմյէին լիակատար իշխանութիւնեցողը առաջ տանիլ իր միջնորդութեան իշխանութիւնը: Ֆռանսըզի գործակալներուն իշխանութեան անբաւականութիւնը պատճառեց խելմը օր լուռի ու խօսակցութիւն դադարում: Օգոստոսի 6 էն ետեւ Ֆռանսըզին գործակալները ներկայացուցին մէկ ծանօթութիւն մը, ուսկից որ նկատմամբ ժողովքին կարգադրութեան առաջ եկած դժուարութիւնները, չէր կրնար բանի մը յարմարցնելով որոշել վէճը, ու առաջ չէր երթար ան խօսակցուելը որոյ համար ժողոված էին: Այսպիսի անպիտան խօսակցութեանց անցաւ ժամանակը մինչև օգոստոսի 10ը: Մոսկովին ու Պուլշին գործակալները որովհետեւ չունէին իշխանութիւն աս օրէն անդին ուշացնել, ժողովը արձակվեցաւ, ու թէ ասկից ետքը Նէմյէին կայսրը ինչ պիտոր ընէրնէ՝ ժողովքին ընթացքէն յայտնի որոշված էր, որ կը շարունակէր ամենուն խաղաղութիւնը ընել տալու: ու որովհետեւ ասանկ ըլլալով հիւ մէկ կերպով մը յոյս չի մնաց, որ շատ ատենէն պիտի ետեւէն ինկերէր, ու գիտէր ալ դաշնակցաց բարի դիտաւորութիւնը, ու Ֆռանսըզին ըրած յայտարարութիւնը որ հիւ մէկ տարակոյս մը չէր թողուցած, բռնադատվեցաւ կայսրը իրեն ցաւով սրտին որ անկից ետքը ղէնքի ձեռք դարնէ, ու ասով միայն կը մտնէր թաղի որ պատերազմը չի նորոգվի տէրի ամեն կարեւր հնարքը բանեցուց:

Կայսրը 3 տարի շարունակ ու անդադարելի երկայնատութեան ջանաց հաստատել մէկ կարեւր հիմ մը կի՞ թէմէլ մը՝ որոյ վրայ կարենար կայնիլ մէկ շքմարիտ ու հաստատուն խաղաղութիւն մը Աւստրիայի ու բոլոր Եւրոպայի, բայց ամեն իրեն ջանքը ոչնչացաւ, ալ ուրիշ կերպով չամբայնը չի մնաց բացի ղէնքէն: Կայսրը կը պատերազմի ամենց իրեն անձնական շահախնդրութեան բռնադատվելով միայն մէկ ցաւալի հարկաւորութիւնը իրեն մեծ պարտքէն, ու այնպիսի բանաւոր պատճառէմը, որ ամեն իրեն հաւատարիմ

հպատակները, թէ չքա ու թէ վերջապէս Նաբօլէօննալ՝ որ մէկ հանդարտ ու արդար լոպէի մը մէջ ըլլարնէ, պիտոր արդար ճանչընար ու իրաւունք տար: Աս պատերազմին արդարութիւնը անջնջելի տպաւորված է ամեն Աւստրիացոյ ու Եւրոպայու ինչ և իցի իշխանութեան տակ եղողներուն սրտին մէջ, որ պէտքը չէ որ մէկը վաղէ ղէնահալթի՝ աս պատճառներս զօրաւոր ու խելք պառկըցընելու ընել տալու համար: Ազգը ու դուռնը ընէն իրենց պարտքը: Ամեն ղինուորեւ տէրութեց դաշնակցութիւնը՝ հասարակաց հարկաւորութիւնը, շահուն ու իրենց անկախութեան համար, օգնական կը լլայ մը ու ժին ու զօրուէր. ու աս պատերազմին ելքը օգնականութեան կը յարուսանք որ աս մեր ջանքը ու խաղաղութեան համար աշխատանքը կը պսակէ:

Բ ԱՆ ԱՍԻՐԱԿԱՆ.

Երբոր Ֆրանսըզները ետ բաշվեցան Մոսքայի կոտորածէն ետեւ, ձգեցին Մոսքային ու Նիէմին մէջ տեղը 1131 կտոր թօփ որ ետքը ժողովեցին Մոսկովները: Աղեքսանդր կայսրը հրամայեց որ աս թօփերով տնկրվի երկու բարձր սիւներ, մէկը Մոսքային մէջ, մէկը Նիւմին Բիթթոպուլուկին մէջ: Գաղաբարը «Իսթեմ» աս շինելու սիւներուն առաջարկեցին ճարտարապետները Աղեքսանդր կայսր, աս ձևը շատ հաւնեցաւ կայսրը և էր հետեւեալ կերպով. աս սիւները պիտոր ընլային ծր խաթ շարած թօփէ ցի էն վարի խաթը պիտոր շարվէր կըր ձևով ու ուղղահայեաց հորիզոնին ցի տնկած շիտակ, և բերանին դէպ ի վեր՝ էն խոշոր թօփերը, ասոր վրայ պիտոր դրվէր նոյն շարած թօփերուն կըրուէ մէկ հասար մէն մէնէ հալխամը օթման ծակ, աս մէն մէնէ հալխային վը խաթմընալ թօփ կը շարվի՝ քիչմը մանր էն տակի թօփերէն, նորէն մէկ մէն մէնէ հալխամընալ, և այսպիսի համեմատութեան կըր բարձրանայ մինչև ծր խաթ: Աս սիւներուն վերի խաթը վարի խաթը պիտոր դրվին էն խոշոր թօփերը ու հաւան թօփինները՝ տնկած շիտակ բերանին վեր. տրամագիծէն վարի բոլորակին պիտոր ըլլայ 17 ոտնաչափ: Աս սիւներուն էն տակը պիտոր ըլլայ քառակուսի մէն մէնէ պատվանդան, և անոր չափը պիտոր ըլլայ 28 ոտք. սիւներուն բարձրութեան չափը պիտոր ըլլայ 84 ոտք:

Աս գործքս՝ որ է պատմութիւն հիմակվան ատենիս, տանը հինկ օրը մէյնը կը տրաքվի.
'Ի ՎԵՆԵՏԻԿ 'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ: